


**ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ**



**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Միրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով**:

	<p><b>Դատարան</b> դիմելու դեպքում Ձեր և «Ռ-ԵՆԵՏԱ» ՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:</p>
	<p><b>Ֆինանսական համակարգի հաշտարարին</b> դիմելու դեպքում Ձեր և «Ռ-ԵՆԵՏԱ» ՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:</p> <p>Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն <b>ԱՆՎՃԱՐ</b> են:</p> <p>Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Ռ-ԵՆԵՏԱ» ՓԲԸ-ին: «Ռ-ԵՆԵՏԱ» ՓԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:</p> <p>Ֆինանսական համակարգի հաշտարարը <b>չի կարող քննել</b> Ձեր բողոքը, եթե՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բողոքը «Ռ-ԵՆԵՏԱ» ՓԲԸ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,</li> <li>2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),</li> <li>3. «Ռ-ԵՆԵՏԱ» ՓԲԸ պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,</li> <li>4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:</li> </ol>
	<p>Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:</p>



**Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ**

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան  
Գտնվելու վայրը՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 411 սենյակ  
Հեռ.՝ (010) 582-321, 582-322  
Էլ. հասցե՝ info@fsm.am  
Ֆաքս՝ (010) 582-421  
Կայք՝ www.fsm.am



Միբեյի՝ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Ռ-ենեսա» ՓԲԸ-ն հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ «Ռ-ենեսա» ՓԲԸ -ն չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Ռ-ենեսա» ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Ռ-ենեսա» ՓԲԸ միջև վեճերը, սակայն կարող է «Ռ-ենեսա» ՓԲԸ նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Ռ-ենեսա» ՓԲԸ –ն խախտել է օրենքի պահանջները:

**ՀՀ Կենտրոնական բանկ**



Գտնվելու վայրը՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6  
Հեռ.՝ (010) 592-697  
Էլ. հասցե՝ chairman@cba.am  
Ֆաքս՝ (010) 565-496  
Կայք՝ www.cba.am

Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Ռ-ենեսա» ՓԲԸ միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ «Ռ-ենեսա» ՓԲԸ հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք «Ռ-ենեսա» ՓԲԸ հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: